

ՌԱՄՁԷՑ ՄԱԿԴՈՆԱԼԴ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

II

Նորէն հայ-վրացական յարաբերութիւններ. — «Դրացիներ առանց ընդհանուր քշմամիի» — Զեկոյց մը բուրժահայ խնդրի մասին եւ հարցապնդում հորհրդարանի մէջ. — Սնունդէն. — Հանդիպում մը հայոց դեսպանատան մէջ. — Վրացական ապստամբութիւնը 1924 թ. եւ անոր տպաւորութիւնները. — Կոտորած եւ յուսալսարութիւն. — Անգլիոյ Աշխատաւորականները եւ բոլշեւիզմը. — Ինչո՞ւ կ'ուզեն ճանչնալ Սովիետները. — Մակիտնալդի դաւիժներն ընդհանուր օրիէնտասիոնը. — Խոհեք Ռուսիոյ անդամատումի շուրջը. — Թրքամոլ վրացիներ. — Միջադէպ մը Հոմի մէջ. — Ուրբայնայի անջատման պարագային. — Ազգերու Դաշնակցութիւնը. — Համաշխարհային Էւօլիսիոնի կրկնակ ձգտումը. — Դէպի ազգայնապաշտ եւ դէպի կենդրոնացում. — Արեւելեան դաշնակցութիւններ. — Թուրքական պատուհասը. —

ՎԵՐՄՏԻՆ Հանդիպեցինք Լոնտոնի մէջ — 1921-ի աշնան վերջերուն — երբ նոր վերադարձեր էր Եզիպտոսի ու Պաղեստինի իր երկարատեւ ուղեւորութենէն:

Գիտէր արդէն որ օր մը պիտի ստանձնէր բրիտանական կայսրութեան ղեկը եւ կը պատրաստուէր իր ծանր պաշտօնին համար: Անկէ ոտաջ դացած էր Հնդկաստան, պրպտած էր լաիսածաւալ կայսրութեան դրեթէ բոլոր ծայրերը:

Ընդունեց զիս Howit Road-ի իր անշուք բնակարանին մէջ, Հէմփտեսէտ արուարձանին մէջ: Խօսեցինք երկար, միշտ նոյն նիւթին շուրջ — հայ-վրացական յարաբերութիւններու: Կ'ունկնդէր, ինչպէս միշտ, խորունկ ու չաղրութեամբ, մերթ ընդ մերթ հատու խօսք մը արտասանելով զեկոյցիս ընթացքին. «Two

neighbours without a common enemy» — ըսաւ անգամ մը նշանակալից շեշտով մը*):

Այդ քանի մը բառերով կը բնորոշէր հայ-վրացական յարաբերութիւններու բարդ, կրնճոտ, ողբերգական պատկերը, այդ Ֆրազի մէջ կը խտացնէր մեր ամբողջ դժբախտութիւնը...:

Արդարեւ, վրացիներու աչքին, տարաբախտաբար, թուրքը թշնամի չէ, մինչ անհաշտ թըշնամի կը դիտուի Ռուսաստանը: Իսկ հայոց համար երգուեալ, դարաւոր ոտիս մըն է թուրքիան, մինչ Ռուսաստանը չի ներկայանար անոնց աչքին որպէս մահացու թշնամի մը, քանի որ Ռուսական կարգերու տակ հայ ազգը ընդհանրապէս ունեցեր է գէթ Ֆիզիքական ապահովութիւն (յարաբերակա՞ն...), իսկ ատենօք՝ նաեւ յառաջադիմութեան ու բարօրութեան որոշ երաշխիքներ...:

Թողի Մակիտնալդի մօտ նոյն չարատանջ հարցերու մասին ընդարձակ տեղեկադիր մը, որ տարեր էի հետս**):

Հրաւիրեց ինձ զեկոյց մը տալ Խորհրդարանի Աշխատաւորական հատուածին՝ թուրքահայոց հարցի մասին:

Քանի մը օր յետոյ Բրիտանական պարլամենտի շէնքին մէջ կայացաւ այդ զեկոյցումը Մակիտնալդի նախագահութեան տակ: Աշխատաւորական հատուածը լսելէ ետք՝ միաձայն

*) «Երկու դրացիներ, որ չունին ընդհանուր թշնամի»:

**) Ինձմէ ետքը Աշխատաւորական լիազօրին մօտ դացեր է վրացական պատգամաւորութիւն մը հանդուցեալ Զիւէյիձէի դիւսաւորութեամբ: Մակիտնալդ կարգացեր է անոր՝ իմ յանձնած տեղեկադիրը՝ ցուցնելու համար վրացի առաջնորդներուն, որ հայերն իրօք կը բաղձան հայ-վրացական համերաշխութեան իրագործմանը: